յԵրուսաղէմ յուխտատեղիս 'ի Գողգոթա, և 'ի սահմանեալ տուրս, հրովարտակաւ նախագահութիւնն է Լատինաց, նմանապէս ըստ սովորութեան և ըստ զօրութեան Կայսերական դաշնագրոյն, որպէս 'ի Կոստանդինուպոլիս, նոյնպէս և յայլ տեղիս յորժամ ժողովիմք ընդ աղգս քրիստոնէից, միշտ նախագահութիւնն սեփհական է Լատինաց. և ապա մատոյց զդաշնագիրս և զայլ գրեանս, որոց խմաստքըն համաձայն էին բանից իւրոց։ Եւ 'ի հարցանել դատաւորին ցայլազգիս ոմանս. նոքա ետուն պատասխանի եւ ասեն, որ ձեռն մնան փականք երից դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի, նա յամենայն ժողովս նախագահ բազմի, և այժմ փականքն այնոքիկ են 'ի ձեռս Լատինաց. և դատաւորն հաստատեաց զնախագահութիւն նոցին եւ արգել զՑոյնս։

Յովհաննէս վարդապետ տեղական, դնէ երկաթ 'ի պատուհանս Բեթղեհէմի վանաց։ Եւ զկնի քննութեան դատաւորի, եկիպ զմի բերանն ջրհորոյն, որ 'ի վերայ ճանապարհին. յորմէ լնուին այլազգիք Սիոնի քարինս եւ հողս, և մնաց մի բերանն 'ի ներքս 'ի վանս Ս. Փրկչի. և դատաւորն գրեաց առ բնակիչս Սիոնի չհակառակիլ ընդ Հայոց վասն ջրհորոյն։

Լատին կղերք ունէին ոմս յաւուրց անտի Անդրիաս Պատրիարքին Հայոց, որ Նորոգեաց զգերեզման Ս. Կուսին եդեալ 'ի մտի հասուցանել չարիս Հայոց 'ի դիպող ժամանակի, որոյ վասն գրգռեցին զլուսարարն իւրեանց գերեզմանի Ս. Աստուածածնի հակառակիլ միաբանացն Հայոց, և 'ի բաց վանել անտի զուխտաւորս նոցա, որպէս թէ չունիցին նոքա անդ իրաւունս. զի եկեղեցին և գերեզմանն սեփհական իցէ միայն Լատինաց։ Զայսպիսի անկարգութիւնս Լատինաց ազգ արարին Հայք դատաւորի քաղաքին, եւ մատուցին զհրովարտակս և զգրեանս վասն սեփհականութեան իւրեանց։ Եւ դատաւորն ետ ընթեռնուլ զնոսա 'ի ժողովի անդ, յորում էր եւ թարգմանն Լատինաց Մանսուր եւ ետ կոչել զերկոսին այլազգի դռնապանս գերեզմանի Ս. Կուսին. զի 'ի սմին ժամանակի 'ի ձեռս նոցա էր փականք դրանն, եւ ըստ թարգմանն Ցունաց, զլուսարար տաճարին Ս. Յարու-